

**ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ**

Ստուգաթերթ N 5

Տնտեսավարող սուբյեկտի (մասնաձյուղի) _____ համար

_____ 201 թ.

(տեսչության տարածքային մարմնի անվանումը)

(հասցեն)

(հեռախոսահամարը)

(ստուգող անձի պաշտոնը)

(ազգանունը, անունը, հայրանունը)

(ստուգող անձի պաշտոնը)

(ազգանունը, անունը, հայրանունը)

(ստուգող անձի պաշտոնը)

(ազգանունը, անունը, հայրանունը)

Ստուգման սկիզբ (ամսաթիվ)՝ _____ ավարտ՝ _____

(տնտեսավարող սուբյեկտի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

(ՀՎՀՀ-ն)

(տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը)

(հեռախոսահամարը)

(տնտեսավարող սուբյեկտի՝ մասնաձյուղի ղեկավարի կամ վստահված անձի ազգանունը, անունը, հայրանունը)

(հեռախոսահամարը)

Ստուգման հանձնարարագիր _____ ում կողմից _____ երբ է տրված _____

Ստուգման նպատակը/Ընդգրկված հարցերի համարներ

Տեղեկատվական բնույթի հարցեր					
հարց	պատասխան			գնահատման բալլը	չի պահանջվում (✓)
	բալլեր				
	5	7	9		
Շահագործվող էլեկտրատեղակայանքների ընդհանուր քանակը՝ ենթակայաններ, բաշխիչ, փոխանցատիչ կետեր / էլեկտրահաղորդման օղային և մալուխային գծեր (հատ/կմ)	Մինչև 500 / 800	501-ից մինչև 1500 / 801-ից մինչև 5000	1501 / 5001-ից ավելի	(բալլx0.6)	
Շահագործվող էներգատեղակայանքների ընդհանուր քանակը՝ գազակարգավորիչ կետեր (ԳԿԿ), պահա-րանային գազակարգավորիչ կետեր (ՊԳԿԿ), անհատական ճնշման	Մինչև 300 / 150	301-ից մինչև 1000/ 151-ից մինչև 400	1001-ից ավելի / 401-ից ավելի	(բալլx0.6)	

կար- գավորիչ սարք (ԱՃԿՍ) / գազատարներ (հատ/կմ)					
Վթարայնության գնահատում՝ վերջին 1 տարվա կտրվածքով (վթարներ՝ 100 հազար բաժանորդի հաշվով)	Մարդու կյանքին վնասի պատճառմամբ (ոչ մահացու ելքով) մինչև 4 վթար	Մարդու կյանքին վնասի պատճառմամբ ոչ մահացու ելքով 5 և ավելի կամ մահացու ելքով մինչև 4 վթար	Մարդու կյանքին վնասի պատճառմամբ՝ մահացու ելքով 5 և ավելի կամ խմբակային վթար	(բալ x 1)	
Նախորդ ստուգումից հետո ընկած ժամանակահատվածում (բայց ոչ ավելի, քան 3 տարին) մասնաճյուղի (Մ) կողմից գործարկված 6կՎ և բարձր լարման էլեկտրատեղակայանքների (նոր կառուցված և վերակառուցված) քանակը	մինչև 50	51 և ավելի մինչև 150	151 և ավելի	(բալx0.4)	
Նախորդ ստուգումից հետո ընկած ժամանակահատվածում (բայց ոչ ավելի, քան 3 տարին) Մ-ի կողմից գործարկված միջին և բարձր ճնշման էներգատեղակայանքների (գազի համակարգի նոր կառուցված և վերակառուցված) քանակը	մինչև 50	51 և ավելի մինչև 200	201 և ավելի	(բալx0.4)	
Նախորդ ստուգումից հետո ընկած ժամանակահատվածում (բայց ոչ ավելի, քան 3 տարին) Մ-ի կողմից մինչև լիազոր մարմնից գործարկման եզրակացություն ստանալը, էներգատեղակայանքը չգործարկելու պահանջի խախտումներ	Տարեկան մինչև 5 խախտում	Տարեկան 6-ից մինչև 15 խախտում	Տարեկան 16 և ավելի խախտում	(բալx0.8)	
պատահարի դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, լիազոր մարմնին հայտնելու պահանջի խախտումներ	Տարեկան մինչև 3 խախտում	Տարեկան 4-ից մինչև 10 խախտում	Տարեկան 11 և ավելի խախտում	(բալx0.6)	
Ընդամենը					

Վերահսկողական բնույթի հարցեր								
NN ը/կ	հարցի անվանումը	ստուգման մասին նշումը (✓)		չհպահանջվում (✓)	հղում նորմատիվ իրավական ակտին	կշիռը	մեկնաբանությունը	ստուգման մեթոդը
		այո	ոչ					
1.	Էլեկտրաէներգետիկական համակարգի տնտեսավարող սուբյեկտում՝ դրա մասնաճյուղում, համապատասխան մասնագիտական (տեխնիկական) կրթություն և փորձ ունեցող անձնակազմն առկա է				1. Հավելվածի II գլխի 5-րդ բաժնի 39-րդ կետ	5		1° 2°
2.	Տեխնիկական ղեկավարի				3. Հավելվածի I գլխի			

	կողմից հաստատված՝			3-րդ բաժնի 2-րդ կետի «ա» ենթակետ			
2.1.	հրահանգներն առկա են			- " -	4		1°
2.2.	կանոնադրություններն առկա են			- " -	4		1°
2.3.	պաշտոնական հրահանգներն առկա են			- " -	4		1°
3.	Գազի տնտեսության շահագործման, սպասարկման և վերանորոգ- ման հատուկ հրահանգները՝ հաստատված կազմակերպության գլխավոր ինժեների կողմից, առկա են			2. Հավելված N 26-ի I բաժնի 2-րդ կետ	4		1°
4.	Բացակայում են, առանց լիազոր մարմնից ստացված գործարկման եզրակացության գործարկված, էներգատեղակայանքներ			4. 8-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետ	5		1°
5.	Բացակայում են տնտեսավարող սուբյեկտի՝ դրա մասնաճյուղի կողմից շահագործվող էներգատեղակայանքներում տեղի ունեցած պատահարների մասին, լիազոր մարմնին չհայտնելու դեպքեր			4. 8-րդ հոդվածի 3-րդ մաս	3		1°
6.	Էներգամատակարարող կազմակերպությունն սպառողների էներգատեղակայանքներում մարդկանց կյանքին վնասի պատճառմամբ տեղի ունեցած վթարների մասին, 3-օրյա ժամկետում, հայտնել է լիազոր մարմնին			5. Հավելված N 2-ի 1-ին բաժնի 5-րդ կետ	5		1°
7.	Պատահարների քննության արդյունքներն՝ արձանագրությամբ, ձևակերպված են			5. Հավելված N 2-ի 2-րդ բաժնի 8-րդ կետ	4		1°
8.	Էլցանցերի հիմնական և օժանդակ սարքավորումների նորոգման հեռանկարային տարեկան և ամսական ժամանակացույցներն առկա են			1. Հավելվածի II գլխի 61-րդ կետ	4		1°
9.	Էներգասարքավորումների աշխատանքում հրդեհների, վթարների և այլ տեխնոլոգիական խախտումների կանխարգելիչ միջոցառումներն			1. Հավելվածի II գլխի 57-րդ կետի 4-րդ ենթակետ	4		1°

	իրականացվում են						
10.	Փորձարկումների կատարմանը թույլատրվող անձնակազմի հատուկ նախապատրաստումը և պահանջվող գիտելիքների ստուգումը՝ հանձնաժողովի կողմից, իրականացվում է				3. Հավելվածի II գլխի 19-րդ բաժնի 1-ին կետ	4	1°
11.	Փորձարկումներ կատարող աշխատողների փորձարկումներ իրականացնելու իրավունքը, էլեկտրակայաններում աշխատանքի նորմերի և կանոնների իմացության ստուգման վկայականի «Հատուկ աշխատանքներ կատարելու իրավունքի հավաստում» տողում գրառմամբ, հաստատված է				3. Հավելվածի II գլխի 19-րդ բաժնի 2-րդ կետ	4	1°
12.	Էլեկտրակայաններում աշխատանքներն սկսելուց առաջ շիննոնտաժային կազմակերպության (ՇՄԿ) կողմից անհրաժեշտ տեղեկատվությունը ներկայացվում է (աշխատանքների բովանդակություն, ծավալ, անձնակազմի ցուցակ)				3. Հավելվածի 24-րդ բաժնի 1-ին կետ	5	1°
13.	Ցածր ռիսկայնության պայմաններում աշխատանքներ կատարողները նախնական և սկզբնական իրահանգավորում անցնում են				3. Հավելվածի 25-րդ բաժնի 2-րդ կետի «ա» ենթակետ	3	1°
14.	Միջին ռիսկայնության պայմաններում աշխատանքներ կատարողները 3 տարին մեկ անգամ հերթական քննություն՝ աշխատանքի անվտանգության ստանդարտներից, հանձնում են				3. Հավելվածի 25-րդ բաժնի 3-րդ կետի «ե» ենթակետ	4	1°
15.	Բարձր ռիսկայնության պայմաններում աշխատանքներ կատարողները տարեկան մեկ անգամ հերթական քննություն՝ աշխատանքի անվտանգությունից, հանձնում են				3. Հավելվածի 25-րդ բաժնի 4-րդ կետի «գ» ենթակետ	5	1°
16.	Էներգաօբյեկտում համապատասխան մասանագիտական կրթություն, աշխատանքային փորձ չունեցող և նոր				1. Հավելվածի II գլխի 40-րդ կետ	4	1°

	պաշտոնի տեղափոխվող անձանց, մինչև ինքնուրույն աշխատանքի անցնելը, տվյալ շյուղում կիրառվող ծրագրով ուսուցումն իրականացվում է						
17.	Յուրաքանչյուր աշխատատեղի պաշտոնական հրահանգներում նշված են՝				1. Հավելվածի II գլխի 86-րդ կետ		
17.1.	այն սարքավորումների սպասարկման հրահանգների, սարքավորումների և սարքվածքների սխեմաների ցանկը, որոնց իմացությունը պարտադիր է տվյալ պաշտոնի համար				1. Հավելվածի II գլխի 86-րդ կետի 1-ին ենթակետ	4	1°
17.2.	աշխատողի իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը				1. Հավելվածի II գլխի 86-րդ կետի 2-րդ ենթակետ	4	1°
17.3.	փոխհարաբերությունները վերադաս, ենթակա և աշխատանքի բերմամբ կապված այլ անձնակազմի հետ				1. Հավելվածի II գլխի 86-րդ կետի 3-րդ ենթակետ	4	1°
18.	Շահագործման մեջ գտնվող ռելեական պաշտպանության և էլեկտրաավտոմատիկայի (ՌՊԷԱ) սարքվածքների մասին ՌՊԷԱ ծառայությունում հետևյալ տեխնիկական փաստաթղթերը՝				1. Հավելվածի VIII գլխի 803-րդ կետ		
18.1.	անձնագիր-արձանագրություններն առկա են				1. Հավելվածի VIII գլխի 803-րդ կետի 1-ին ենթակետ	3	1°
18.2.	կարգաբերման և ստուգման հրահանգները կամ մեթոդական ցուցումներն առկա են				1. Հավելվածի VIII գլխի 803-րդ կետի 2-րդ ենթակետ	3	1°
18.3.	նախադրվածքների քարտերի և բնութագրերի տեսքով՝ սարքվածքների մասին տեխնիկական տվյալներն առկա են				1. Հավելվածի VIII գլխի 803-րդ կետի 3-րդ ենթակետ	3	1°
18.4.	սկզբունքային, հավաքակցման կամ սկզբունքային-հավաքակցման կատարողական աշխատանքային սխեմաներն առկա են				1. Հավելվածի VIII գլխի 803-րդ կետի 4-րդ ենթակետ	3	1°
18.5.	ՌՊԷԱ բարդ սարքվածքներն ստուգելու համար աշխատանքից հանելու (աշխատանքի մեջ				1. Հավելվածի VIII գլխի 803-րդ կետի 5-րդ ենթակետ	4	1°

	նոսրնելու) աշխատանքային ծրագրերն առկա են						
19.	Կազմակերպության տարածքում, որի էլեկտրակայանքներում իրա-կանացվել են աշխատանքները, շինմոնտաժային կազմակերպությունը (ՇՄԿ) տվյալ կազմակերպությանն աշխատանքների բովանդակության, ծավալների և կատարման ժամկետների վերաբերյալ տեղեկություններ ներկայացրել է				3. Հավելվածի II գլխի 24-րդ բաժնի 1-ին կետ	4	1°
20.	Կազմակերպությունում, որի կայանքներում կատարվել են աշխատանքներ, ՇՄԿ ներկայացուցչի հետ համատեղ ձևակերպված, աշխատանքների կատարման ակտ-թույլտվությունն առկա է				3. Հավելվածի II գլխի 24-րդ բաժնի 2-րդ կետ	4	1°
21.	Շահագործող կազմակերպության ստորաբաժանման ղեկավարի կողմից, ՇՄԿ անձնակազմի աշխատանքի անվտանգության վերաբերյալ հրահանգավորման անցկացումն իրականացվում է				3. Հավելվածի II գլխի 24-րդ բաժնի 4-րդ կետ	4	1°
22.	Էլեկտրական ցանցերը տնօրինող կազմակերպությունը, էլեկտրական ցանցերի պահպանվածության ապահովման ու դժբախտ պատահարների կանխման նպատակով, էլեկտրական ցանցերի անվտանգության գոտիների խախտումներ հայտնաբերելիս, նրանց զգուշացնում է, իսկ խախտումը չդադարեցնելու դեպքում՝ դիմում իրավասու մարմիններին				6. Հավելվածի 4-րդ բաժնի 49-րդ կետ	5	1°
23.	Կենցաղային նպատակներով էլեկտրական, ջերմային էներգիա և բնական գազ սպառողների էներգատեղակայանքներում տեղի ունեցած պատահարների քննությունն իրականացվում է				5. Հավելված N 2-ի 2-րդ բաժնի 1-ին կետի «բ» ենթակետի վերջին պարբերություն	4	1° 2°
24.	Էներգակայանքների				1. Հավելվածի II գլխի	5	1°

	սարքավորումների, շենքերի, շինությունների և հաղորդակցողիների տեխնիկական սպասարկումը, պլանային նորոգումը և ռեսուրսներն սպառած կամ էներգահամակարգի հարաչափերին չհամապատասխանող սարքավորումների վերականգնումը, արդիականացումը կամ փոխարինումը կազմակերպվում է			59-րդ կետ			2°
25.	Օպերատիվ փաստաթղթերը, գրանցող ստուգիչ-չափիչ սարքերի դիագրամները, օպերատիվ-կարգավարական խոսակցությունների ձայնագրությունները, ԿԱՀ-ի օպերատիվ-տեղեկատվական համալիրի կազմած ելքային փաստաթղթերը սահմանված ժամկետներով պահվում են՝			1.*Հավելվածի II գլխի 90-րդ կետ	5		1° 2°
25.1.	գրանցող սարքերի ցուցմունքների գրանցումները կրիչների վրա 4 տարի պահվում են			- " -	4		1° 2°
25.2.	բնականոն պայմաններում օպերատիվ խոսակցությունների ձայնագրությունները 30 օր պահվում են			- " -	4		1° 2°
25.3.	վթարների և աշխատանքում այլ խախտումների դեպքում օպերատիվ խոսակցությունների ձայնագրությունները 6 ամիս պահվում են			- " -	4		1° 2°

Տվյալ ստուգաթերթը կազմվել է հետևյալ նորմատիվ փաստաթղթերի հիման վրա՝

1. ՀՀ կառավարության 27.12.2007 թ.՝ «Էլեկտրակայանների և ցանցերի շահագործման վերաբերյալ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1605-Ն որոշում.
2. ՀՀ կառավարության 22.12.2005 թ.՝ «Անվտանգության կանոնները զազի տնտեսությունում» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 2399-Ն որոշում.
3. ՀՀ կառավարության 23.11.2006 թ.՝ «Էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոններ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1933-Ն որոշում.
4. «Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (օրենք).
5. ՀՀ կառավարության 12.04.2007 թ.՝ «Էներգատեղակայանքներում տեղի ունեցած պատահարների դասակարգումը, դրանց մասնագիտական քննության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 18-ի N 1530-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 580-Ն որոշում.

6. ՀՀ կառավարության 02.04.2009 թ.՝ «Էլեկտրական ցանցերի անվտանգության գոտիների վերաբերյալ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 363-Ն որոշում:

Ստուգման մեթոդների պայմանական նշանակումներն են՝

1° - փաստաթղթային

2° - ակնադիտական

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար

Դ. Սարգսյան